երկար ժամանակով, կատաղի բէակցիա, կաշկանդում է եւրոպական ընկերվարութեան հակարոյշեւիկ շարժումները։ Իրենց պարբերական թերթերում եւ իրենց համագումարներում բոլշեւիկեան խելագարութեան դէմ ծառանալով հանդերձ, ընկերվարական վարիչ խաւերը այնուամենայնիւ խպտառ չեն լքում Սովետները եւ թէ՛ կառավարութեանց եւ թէ՛ պարլամենտների ազդեցութեամբ ճգնում են մեղմել նրանց դէմ ծայր տուած հակահարուածը։

Անգլիայում Լէյբըր Պարտին, վճռապէս հակառակ էր Սովետների հետ խզումին, եւ Ֆրանսայում ընկերվարականները մինչեւ վերջը ճգնեցին պահել Բակովսկուն եւ թոյլ չտալ Ֆրանկո-սովետական յարաբերութիւնների ցրուութիւն։

Պահպանողական ու յեղափոխական խաւերը ճգնում են ընկերվարութեան այս pro սովետ ընթացքը բացատրել երկու աշխատաւորական հոսանքների — ընկերվարական եւ կոմունիստ — գաղափարական ծածուկ զինակցութեամբ ընդդէմ բուրժուազիայի։ այս թեզը հրապարակ են նետում մանաւանդ ընտրական պայքարի չրջաններին, բայց այս բոլորը դիտումնաւոր եւ վատ տեսակի մանեւրվր է։ ընկերվարութիւնն, ինչպէս ասացի, ծանր վախեր ունի բոլշեւիզմին յաջորդող բէակցիայից եւ այն ոչ միայն Ռուսիայում, այլ եւ ամբողջ աշխարհում։ Անցեալում փորձը ցոյց է տուել, որ մի խոշոր պետութեան — եւ մասնաւորապէս Ռուսիոյ բէակցիան — ուժգնապէս անդրադառնում է հարեւան երկրների վրայ եւ մեծապէս դժուարացնում այն դիրքերն ու դրաւումները, որ մարտական աշխատաւորութիւնը երկարատեւ ու բազմաղոհ պայքարով ձեռք է բերել։

Ահա թէ ինչու՝ հակարոյշեւիկեան պրոլետարիատն աշխատում է զանազան կողմնակի միջոցներով երկայնաձգել ռուսական տագնապը, այն յուսով, թէ գուցէ էվոլիւցիան օգնութեան հասնի եւ դառն փորձութիւնները զգաստութեան բերեն Կրեմլինի դիկտատորներին։

Իմաստո՞ւն, թէ անիմաստ է ընկերվարութեան այս քաղաքականութիւնը հանդէպ Սովետների։ դա այլ հարց է։ ըստ իս եւրոպական կազմակերպուած աշխատաւորութիւնը իր այդ երկդիմի, վարանոտ ընթացքով միայն օժանդակում է ռուս աշխատաւորութեան թշուառութեան եւ զոհաբերում է այդ արդէն չափից դուրս չահագործուած ու արիւնաքամ զանգուածների իրական շահերը հեռաւոր, ենթադրեալ հաւանականութեանց — միջազգային բէակցիային։

Այսպէս թէ այնպէս, Սովետները ամէն օր ընկերվարականների դէմին ամենադեհիկ լուսանքներ ու անէծքներ թափելով հանդերձ, յայնօրէն օգտւում են նրանց այդ աջակցութիւնից, մասնաւորապէս արտասահմանում։ Կարելի է համարձակօրէն ասել, որ առանց արտասահմանեան ընկերվարականների այս բաց կամ ծածուկ աջակցութեան, ոչ մի պետութիւն Սովետներին չէր ճանաչի, եւ նրանց կասկածելի դեսպաններին իր երկիրը ներս չէր առնի։

Եւ յետոյ՝ հաշուի պէտք է առնել նաեւ բոլշեւիկեան գաղափարականութեան հասկանալի հրապոյրը որոշ, անդիտակից շրջաններում։ արտասահմանեան աշխատաւորութիւնը բոլշեւիկեան վայրագ մեթոդներից զարշելով հանդերձ, բանուորա-դիւղացիական պետութեան այս յանդուգն փորձի առջեւ համակրանք ասե՞մ, թէ՞ բարեացակամ հետաքրքրութիւն ունի եւ շատ էլ հաճոյքով չէր տեսնի նրա անհետեւանք փլուզումը եւ յամենայն դէպս նա չի դաշնակցի հակարոյշեւիկ տարրերին։

Եւ եթէ նկատի առնենք Երկրորդ Ինտերնացիոնալի եւ իր միլիոնաւոր բանուորների կազմակերպուած ոյժը եւ ազդեցութիւնը Ռուսիայից դուրս, ապա հասկանալի կը լինի, թէ ինչ կուռ ու հզօր յենարան ունին Սովետները իրենց ատած ու անարդած արտասահմանեան աշխատաւորութեան մէջ։

Կարելի է առանց վերապահութեան ասել, որ վերջին տարիները արտասահմանում ձեռք բերած իրենց քաղաքական ու տնտեսական համեմատական յաջողութիւններով Սովետները ամբողջապէս պարտ են եւրոպական ոչ բոլշեւիկ աշխատաւորութեան։

* * *

Դառնանք այժմ ռուս ժողովրդի հոգեբանական ֆակտորին, որ ըստ իս Սովետների այս